

Մեր անկախութեան և պետութեան ապահովութեան ամուր յենարանն է հայ բանակը, որ անձնագոհութեամբ կատարում է իր պարտքը հայրենիքի առաջ. այս հանդիսաւոր օրը նրա սիրտը ևս լցւել է բերկրանքով ու նա պատրաստ է մեռնել ժողովրդի ազատութեան համար. ողջոյն հայ բանակին (բռնուն ծափեր) :

Ողջունում եմ դաշնակից պետութեանց յանձինս ներկայացուցիչներին Անգլիայի, Ամերիկայի, Ֆրանսայի, Իտալիայի, ողջոյն հերոսական Յունաստանին, (ծափահարութիւններ) : Ողջոյնի խօսք ունեմ ասելու ռուս մեծ ժողովրդին, մեր հարեան Վրաստանին ու Ազրբէջանին (ծափահարութիւններ) :

Փոխ-նախագահ Լեւոն Շանթ. — Լսեցինք հեռագիրը. Հայաստանը մտնում է անկախ ազգերու շարքը : Ամենքիս գլխում հարց է ծագում՝ ի՞նչ պէս եղաւ այդ, ինչո՞ւ : Առհասարակ, պատմական երեւոյթներու ծագումն ու զարգացումը հիմնւած է երեք խոշոր գործօններու վրա. առաջինը պատմական դէպքերու բնական հիւսքն է, պատմութեան խաղը. երկրորդը՝ մեզ շրջապատող մեծ և հզօր ազգերու կամքը, կամ, ինչպէս կըսէի, անոնց քաղաքականութիւնն է : Այս երկու գործօններն այնքան ուժեղ ազդեցութիւն են ունեցել մեր պատմութեան վրա, որ շատերուն կը թւի թէ ներկայ վիճակը արդիւնք է միայն այդ ուժերու. սակայն, կայ մէկ ուրիշ, երրորդ գործօն մը, որ միւսներուն հաւասար կամ, գուցէ աւելի շատ ազդեցութիւն ունեցած է մեր պատմութեան վրա. այդ՝ ժողովրդական կամքն է, որ ես կուզեմ ընդգծել կրկնակի :

Անկախութիւն ստեղծելու համար անհրաժեշտ է ժողովրդի կամքը, եթէ մենք այսօր նստած ենք այստեղ, ժողովրդի կամքն է այդպէս կամեցել, եթէ այսօր ճանաչել են մեր անկախութիւնը, ժողովրդի կամքն է ճանչցնել տւել դայն : Անկախ լինելու կամքն ու ձգտումը մեր ժողովրդի մէջ մեռած չէ եղել երբեք : Եկաւ թրքական ծովը, պատեց մեր ժողովրդին, բայց այդ ծովու մէջէն կղզիի նման վեր բարձրացող մեր բարձունքները՝ Զէյթունը, Սասունը, Ղարաբաղը կուէլ են միշտ : Անկարող լինելով դիմադրել թրքական ծովին՝ մեր ժողովուրդը փառեց դիւանագիտական միջոցներուն, որուն պատմութիւնը շատ հեռուէն կուգայ. ան ձգտեց բերել Ռուսաստանը, որ ազատագրէ զինքը տաճկական լուծէն. Ռուսաստանը եկաւ, բայց մենք չազատագրուեցանք, որովհետեւ ազատութիւնը չեն տար, ազատութիւնը կը խլէի : Հայ մամուլը, գրականութիւնը սկզբից ի վեր քարոզել է ազատութեան և անկախութեան դադափարը, այդպէս է եղել մեր դպրոցը, հայ հոգևորականութիւնը, յանձինս Վարժապետեանի, Հայրիկի, Իգմիրլեանի : Հասաւ ժամանակը, երբ խօսքից գործի պիտի անցնէր հայ ժողովուրդը : ԾՕ-ական թւականներին սկսեցաւ յեղափոխական շարժումը, որուն մասնակից եղան ժողովուրդին բոլոր խաւերը : Սկսեց պատերազմը. հայ ժողովուրդը իր ողջ համակրանքով կապեցաւ դաշնակիցներուն, անկեղծ ու բաց յայտարարելով իր կամքը և այդ կամքի իրականացման համար տւեց վերջին զոհը : Այսօր, երկար աշխատանքից յետոյ, մեր կամքով, մեր կուով ու արիւնով ստացանք այս ազատութիւնը. ուրախ ու շնորհակալ Գերագոյն Խորհրդէն՝ շնորհակալ ենք Եւրոպայի ու Ամերիկայի ժողովուրդներէն ու խորհրդարաններէն, որոնք շատ աշխատեցան մեր դատի համար :

Այս ազատութիւնը մեր կամքի վաւերացումն է պետութեանց կողմէն, բայց... կիսատ է այդ վաւերացումը : Շատերը կըսեն, ինչո՞ւ տխուր ես. ի՞նչպէս կարող եմ ուրախ լինել, օ՛, ի՞նչպէս կարող է ծիծաղել մէկ երեսօ. եթէ ծիծաղի էլ, դա ծիծաղ չի լինի, այլ ծամածռութիւն : Տարին բոլորեցաւ, որ կըսեն թէ խաղաղ է ամէն կողմ. մեր երկիրը, սակայն, չխաղա-